# ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

"MIOUTIOUN"

Organe de L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE de BIENFAISANCE

2, Rue Chérif

ԹԵԼԷՖՕՆ 3605 — LE CAIRE (Egypte)

Տարեկան — կանխիկ 6 Ֆրանք

Զատ — թիւը 1/2 Ֆրանք

«ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է»

«ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՆՔ...»

Ա. ՏԱՐԻ — ՀՈԿՏԵՄԲԵՐ 1912 — Թիւ 10


## ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

### ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

*Վերջին անգամ հաճոյքը ունեցանք հաղորդելու թէ Կովկասի փոխարքայ կոմս Վօրոնցով—Դաշկով սիրայօժարութեամբ հաճութիւն տուած է Կովկասի մէջ հիմնելու Հ. Բ. Ը. Միութեան Մասնաճիւղերը։ Երբոր Միութեան տեղական կազմակերպութեան յարակից կանոնագիրը Նահանգային Իշխանութեան կողմէ վաւերացուի, ինչ որ տեղի կ'ունենայ ընդհուպ՝ Միութեան պաշտօնականութեան հաստատութեանը համաձայն, Կեդր. Ժողովը մտադիր է լիազօր պատուիրակ մը ղրկել Կովկաս, պաշտօն տալով անոր կարեւոր քաղաքներու մէջ մէկ մէկ Մասնաճիւղ հիմնել, որպէսզի Ռուսահայերը եւս նոյնպէս մասնակցին այս բարեգործական ձեռնարկութեան եւ այս կերպով օգնութեան ձեռք կարկառեն իրենց Թուրքահայ բազմաչարչար եղբայրներուն։*

*Միութեան կովկասեան Մասնաճիւղերը յարմար առիթ մը պիտի ընծայեն Ռուսահայ մեծատուններուն, որ իրենց աւանդական ազգասիրութեան աւելի լայն սահմանի մէջ եւ գործնական գետնի վրայ յագուրդ տան։*

---

### ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

*Հայ տառերու գիւտին 1500 ամեայ եւ հայ տպագրութեան 400 ամեայ Յոբելեանի հանդէսները սկսան Հոկտ. 13/26ին ։ Վեհ. Կաթողիկոսի կարգադրութեամբ այս առթիւ ազգային հանդիսութիւնները պիտի տեւեն ամբողջ տարի մը։*

*Նոյն օրը, Միութեան Կեդր. Վարչ. Ժողովը հետեւեալ հեռագիրը ուղղեց Վեհ. Կաթողիկոսին․*

*«Հայկական Միութիւնը իր ջերմագին խնդակցութիւնը կը յայտնէ Հայ Տպագրութեան փառաւոր Յոբելեանին առթիւ»։*

*Արդէն, Տ. Հ. Սաաքեան Կեդր. Ժողովի կողմէ պատուիրակ անուանուած է անձամբ ներկայ գտնուելու համար Էջմիածնի մէջ տեղի ունենալիք հանդէսներուն։*

*Փարիզի մէջ եւս այս Յոբելեանին առթիւ Ճաշահանդէս մը տեղի ունեցաւ 26 Հոկտ.ի գիշերը, Սինէմա Վիոլէի մէջ, նախաձեռնութեամբ «Յիշատակարան»ի հրատարակիչ Տ. Վ. Զարդարեանի։ Մէթր Վ. Մալէզեան բացաւ հանդէսը․ բանախօսեցին նաեւ Պէր. Տիրայր Վարդ. Մարգարեան, Պէր. Գաբրիէլ Վարդ. Գասպարեան, Հայ-կաթոլիկ Աստուածաբան-փիլիսոփայ, Վեր.*

Հայկազուն Խանդամուր (Ակիւլինէ), Հայ-Աւետարանական Հոլիւ, Տէարք Սուրէն Պարթեւեան եւ Ցոլ՞․ Սեթեան ։ Ազգային հին դէմքեր եւ քանդակներ ներկայացուեցան սինէմայի միջոցաւ, ինչ որ գեղեցիկ նորութիւն մըն է եւ մեծ յաջողութիւն գտաւ. յիշենք Հ. Բ. Ը. Միութեան խորհրդապատկերը ։

## ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Գոհունակութեամբ կը ծանուցանենք թէ Միութեան 9 նոր Նախնական Վարժարաններուն բացումը կատարուած է Միացեալ Ընկերութեանց կողմէ, հետեւեալ քրդախօս եւ արաբախօս գիւղերուն մէջ.— Կիլիկիոյ մէջ՝ Եարփուզ, Տէօնկէլ, Գարասուբան եւ Ջընտըճալ. Տիարպէքիրի Սըլիվան եւ Պըշէրիկ գաւառակներու մէջ՝ Թըրպէսի, Հիւսէյնան եւ Տալուռի. Պիթլիսի Դարդան գաւառակին մէջ՝ Հառհառք եւ Քիբան (Սէլըմո)։ Յայտնի է թէ Ազգանուէր Հայուհեաց Ընկ.ը եւս, Միացեալ Ընկ. միջոցաւ, Միութեան անունով եւ հաշւոյն կը բանայ աղջկանց համար գիւղային չորս վարժարաններ ։

Անկէ զատ, Միութեան Կիլիկիոյ Ընդհ. Քարտուղարին հսկողութեամբ՝ Անտիոքի եւ Եագուպլըէի մէջ մէյ մէկ վարժարան բացուած է, Միութեան յատկացուցած միանուագ նպաստներով ։

## ՆՊԱՍՏ

Միութեան կողմէ հետեւեալ նպաստները ղըրկուեցան.— 400 օսմ. ոսկի՝ Միացեալ Ընկերութեան, Միութեան նախնական վարժարաններուն մատակարարութեան համար ։ 30 օսմ. ոսկի Անտիոքի, 15 օսմ. ոսկի Եագուպլըէի, 15 օսմ. ոսկի Գայաճըգի եւ 15 օսմ. ոսկի Ալապաշի ազգ. վարժարաններուն համար (առաջին երկուքը այս նպաստներով նոր բացուած), Կիլիկիոյ Ընդհ. քարտուղար Տ. Միք. Նաթանեանի միջոցաւ ։ 25 օսմ. ոսկի Կոփի (Պուլանըգ) բարձրագոյն վարժարանին, 20 օսմ. ոսկի Սեւերէկի ազգ. վարժարանին, եւ 110 օսմ. ոսկի Սլիվանի եւ Տէրսիմի շրջանակին մէջ նոր վարժարաններ բանալու համար, Միացեալ Ընկերութեան միջոցաւ ։ 120 օսմ. ոսկի Միացեալ Ընկերութեան, Միութեան Վանի վարժապետանոցին նախնական կահաւորումին եւ այլ դպրոցական գոյքերու համար ։

=Կեդր. Ժողովը լսած ըլլալով որ Հաճընի մէջ ճիճիմ վարագոյրի աշխատանոց մը հիմնելու համար՝ Ազգ. Առաջնորդարան դրկուած 100 անգլ. ոսկիի մասնավճարը իր նպատակին չէ գործածուած, ստիպողաբար պահանջեց որ յիշեալ գումարը կեդրոն վերադարձուի ։ Այս մասին գըրուեցաւ նաեւ Կիլիկիոյ վեհ. կաթողիկոսին եւ Միութեան Կիլիկիոյ Ընդհ. Քարտուղարին ։

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կեդր. Ժողովի վսեմ. Ատենապետը շնորհակալութեան նամակներ ուղղեց Վեր. Յակոբ Շահվէլէտեանի (Վառնա), Տ. Յար. Քէչէճեանի (Կ. Պոլիս) եւ Տ. Հմայեակ Ուղուրլեանի (Էվէրէք), որ ամառնային արձակուրդի միջոցին ինքնաբերաբար Միութեան բրօբականտա ըրած եւ սատար նոր մասնաճիւղերու կազմութեան նախաձեռնարկ եղած են ։

## ԱՑՑ

Հաճոյքը ունեցանք ընդունելու Ակնայ նորընտիր Առաջնորդ Գեր. Տիրայր վարդ. Մարգարեանի, եւ Միութեան Ճիպուղիի կարեւոր անդամներէն Տ. Մաթիկ Գէորգօֆի այցելութիւնները ։

## ԺԱՄԱՆՈՒՄ

Կեդր. Ժողովի փոխ-ատենապետ Վսեմ. Եագուպ Արթին Փաշա, եւ Տիգրան Խան Քէլէկեան՝ Կեդր. Ժողովի խորհրդական, որ ամառը Եւրոպա կը գտնուէին՝ Գահիրէ վերադարձան ։ Նոյեմբերի սկիզբները Կեդր. Ժողովի միւս բացակայ անդամները եւս կը վերադառնան ։

## ՄԱՀԱԳՈՅԺ

Անկեղծ ցաւով կը ծանուցանենք մահը Միութեան անկեղծ բարեկամներէն ծանօթ գրագէտ Աղեքսանդր Շաքլեանի ։ Նոյնպէս մեզի կը հաղորդեն մահը Աշոտ Տէր Մանուէլեանի, Խաթ-Քէմպրիճի խոստմնալից ուսանողներէն, որ այդ քաղաքին Միութեան առաջին Մասնաժողովին ատենապետած է, եւ Միութեան Ֆրէզնոյի անդամներէն խոստմնալից պատանիի մը՝ Տիրան Նշիկեանի, որ զաւակն էր Միութեան ջերմ համակիր Տ. Կարապետ Նշիկեանի ։